ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» ապրիլի 2017թ

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. ԱՅՈՒՆՑ

ԳԲԽ-40/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մեհեկան» ՍՊԸ-ի 29.03.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մեհեկան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մեհեկան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ մասնակցել են Աբովյան քաղաքի կարիքների համար փողոցների, մայթերի, բակային տարածքների փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգին: «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 3 արձանագրությամբ «Մեհեկան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն 13.03.2017թ. ծանուցել և խնդրել է, որպեսզի Ընկերությունը Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի որակավորման փաստաթղթերը: Նույն օրը Ընկերությունը ներկայացրել է որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, սակայն Պատվիրատուի կողմից 16.03.2017թ-ին ստացվել է ևս մեկ ծանուցում, ըստ որի Կարգի 51-րդ կետի համաձայն՝ Ընկերության փաստաթղթերը ամբողջական չեն, մասնավորապես թիվ 5.1 հավելվածում նշված չէ հրավերով պահանջվող տաքացուցիչը, ինչի կապակցությամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամբողջական ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սակայն գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացրել մերժել ընկերության հայտը՝ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, սակայն «Մեհեկան» ՍՊԸ-ն էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է տվյալ փաստաթղթերը, որը հնարավոր է Աբովյանի քաղաքապետարանը անհասկանալի պատճառով չի ստացել:

Ընկերությունը գտել է, որ Աբովյանի քաղաքապետարանը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը և Կարգի 52-րդ կետը:

Ընկերությունը գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Չեղյալ համարել «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության «Մեհեկան» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Լևոն և Աննա» ՍՊԸ-ին հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. Կասեցնել Աբովյանի քաղաքապետարանի կողմից «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ցանկացած գործողություն, այդ թվում պայմանագրի կնքման գործընթաց:

2. Աբովյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 30.03.2017թ.-ին թիվ 02/04.1/1239-17 Պատվիրատուին ուղղված գրությամբ խնդրել էր եռօրյա ժամկետում ներկայացնել «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման

ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան վերոնշյալ գրությանը՝ Պատվիրատուն հայտնել է, որ Աբովյան քաղաքի փողոցների, մայթերի, բակային տարածքների փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգ:

Թիվ 3 արձանագրության համաձայն՝ բավարար գնահատված և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեհեկան» ՍՊԸ-ն: 13.03.2017թ. գրությամբ մասնակցին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի կողմից ներկայացվել են փաստաթղթերը՝ բացառությամբ տեխնիկական միջոցներից հրավերով նախատեսված տաքացուցիչի: 16.03.2017թ. գրությամբ մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամբողջական ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Պատասխան չստանալով՝ հանձնաժողովը մերժել է «Մեհեկան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

3. ԳԲԽ-40/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-40/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Մեհեկան» ՍՊԸ-ն մասնակցել են Աբովյան քաղաքի կարիքների համար փողոցների, մայթերի, բակային տարածքների փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգին:

2. «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 10.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «Մեհեկան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Պատվիրատուն 13.03.2017թ-ի գրությամբ Ընկերությանը ծանուցել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, բացառությամբ տեխնիկական միջոցների հրավերով նախատեսված տաքացուցիչի:

4. Պատվիրատուն 16.03.2017թ-ին Ընկերությանը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամբողջական որակավորման փաստաթղթերը:

5. «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Մեհեկան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

6. Ընկերությունը 06.04.2017թ-ին Կենտրոնին է ներկայացրել mehekan@yandex.ru էլեկտրոնային հասցեից Աբովյանի համայնքապետարանի abovyan.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեին պահանջված որակավորման փաստաթղթերը ուղարկված լինելու փաստը ապացուցող քաղվածքը ***(PrtSc SysRq)***:

4. ԳԲԽ-40/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, ուսումնասիրելով «Մեհեկան» ՍՊԸ-ի 29.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Աբովյանի համայնքապետարանի կողմից Աբովյան քաղաքի կարիքների համար «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) գտնում է, որ «Մեհեկան» ՍՊԸ-ի 29.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

«Մեհեկան» ՍՊԸ-ն մասնակցել է Աբովյան քաղաքի կարիքների համար փողոցների, մայթերի, բակային տարածքների փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 3 արձանագրությամբ «Մեհեկան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն 13.03.2017թ-ի գրությամբ Ընկերությանը ծանուցել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ընկերությունը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, բացառությամբ տեխնիկական միջոցների հրավերով նախատեսված տաքացուցիչի:

Պատվիրատուն 16.03.2017թ-ին Ընկերությանը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամբողջական որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրությամբ որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը՝ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

«Մեհեկան» ՍՊԸ-ն 06.04.2017թ. Կենտրոնին ներկայացված գրությամբ որպես որակավորումը հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու վերաբերյալ ապացույց՝ ներկայացրել է Ընկերության էլեկտրոնային փոստի արտատպումը ***(PrtSc SysRq)***

տարբերակով, որով ապացուցվում է այն փաստը, որ «Մեհեկան» ՍՊԸ-ի mehekan@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեից ***17.03.2017թ.*** Աբովյանի համայնքապետարանի abovyan.kotayq@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին սահմանված ժամկետում ուղարկել է գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ նման ապացույցի առկայության պայմաններում Ընկերությանը չի կարող վերագրվել Կարգի 52-րդ կետով սահմանված պարտավորության խախտում, ուստի վերոհիշյալը (անհամապատասխանությունը սահմանված ժամկետում Ընկերության կողմից չշտկելը) հիմք չի կարող հանդիսանա Ընկերության հայտի մերժման համար, քանի որ ներկայացված էլեկտրոնային փոստի արտատպումներից ***(PrtSc SysRq)*** երևում է, որ Ընկերությունը հիմնավորող mehekan@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեից ***17.03.2017թ.*** Աբովյանի համայնքապետարանի abovyan.kotayq@mta.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին սահմանված ժամկետում ուղարկել է Պատվիրատուի 16.03.2017թ-ի գրությամբ պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող ամբողջական փաստաթղթերը:

Նման պայմաններում Կենտրոնը գտնում է, որ «Մեհեկան» ՍՊԸ-ի 29.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է դադարեցնել «ԱԲՀ-ԲԸԱՇՁԲ-17/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ կայացված «Մեհեկան» ՍՊԸ-ի հայտը մերժելու, «Լևոն և Աննա» ՍՊԸ-ին հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝
ԳԲԽ-40/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Ա.Պարանյան